



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 07/20**

22.04.2020թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատավոր Ռաֆիկ Խանդանյանը (այսուհետ՝ Դիմող) թիվ ՎԴ/12319/05/18 վարչական գործի շրջանակներում դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան «Քաղաքացիության մասին» օրենքի 27-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու առումով խնդրահարույց է այնքանով, որքանով չի կարգավորում ՀՀ նախագահի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերն ըստ էության լուծելու ընթացակարգը:

Մասնավորապես, Դիմողի կողմից վիճարկվում է ոչ թե ՀՀ նախագահի կողմից քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերն ըստ էության լուծելու կարգը՝ որպես նորմատիվ պատվիրանի բացակայությունը, այլ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը լուծելու կարգի սահմանադրականությունն այնքանով, որքանով զրկում է ՀՀ նախագահին դրանց ըստ էության քննության իրավասությունից, ինչն էլ պրակտիկայում ուղղակիորեն հանգեցնում է անձի արդար դատաքննության իրավունքի խախտման:

Այսպես, ՀՀ Սահմանադրությունը (այսուհետ՝ Սահմանադրություն) ՀՀ նախագահին (այսուհետ՝ Նախագահ) վերապահել է քաղաքացիության դադարեցման հարցերի լուծման իրավասությունը՝ այդ լիազորության իրականացման կարգն ու դեպքերը օրենքով կարգավորելու վկայակոչմամբ: Այսինքն՝ Սահմանադրության 134-րդ հոդվածի ուժով օրենսդիրը պարտավոր է օրենքով սահմանել դեպքերը և կարգը, որի հիման վրա Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը լուծում է Նախագահը:

Քաղաքացիության վերաբերյալ հարցերի կարգավորմանն է ուղղված «Քաղաքացիության մասին» օրենքը, մասնավորապես՝ նշված օրենքով է կարգավորվում քաղաքացիության դադարեցման կարգը և 23-րդ հոդվածով նախատեսված են քաղաքացիության դադարեցման դեպքերը: Նշված օրենքի 27-րդ հոդվածով կարգավորված է քաղաքացիության հարցերի լուծման վերաբերյալ կարգը: Կարգի ընդհանուր տրամաբանությունը հանգում է հետևյալին.

Քաղաքացիության դադարեցման վերաբերյալ վարույթը հարուցվում է անձի դիմումի հիման վրա, որը ներկայացվում է ոչ այն մարմնին, որն ընդունում է քաղաքացիության դադարեցման վերաբերյալ դիմումի արդյունքում ընդունվող ակտը: Դիմումի քննարկման (վարչարարության) ընթացքին մասնակցում են այլ վարչական մարմիններ ևս, որոնք իրենց իրավասության սահմաններում եզրակացություններ, առաջարկություններ են ներկայացնում: Որպես այդպիսին դիմումի քննությունը եզրափակվում է ՀՀ վարչապետի (այսուհետ՝ Վարչապետ) կողմից քաղաքացիության վերաբերյալ դիմում ներկայացրած անձին քաղաքացիություն շնորհելու կամ դադարեցնելու կամ քաղաքացիության շնորհումը կամ դադարեցումը մերժելու մասին առաջարկություն ներկայացնելով՝ Նախագահին՝ կցելով Նախագահի համապատասխան հրամանագրի նախագիծը: Այդուհանդերձ, Նախագահն իրավասու է քաղաքացիության դադարեցման հարցի ըստ էության լուծման փուլում բացառապես կատարելու Սահմանադրության 139-րդ հոդվածով նախատեսված գործողությունները, այն է՝ ստորագրել հրամանագիրը կամ առարկությունով այն վերադարձնել առաջարկություն ներկայացնող մարմնին՝ Վարչապետին: Եթե իրավասու մարմինը՝ Վարչապետը, չի ընդունում այդ առարկությունը, ապա Նախագահը ստորագրում է համապատասխան ակտը կամ դիմում է Սահմանադրական դատարան: Նշված կարգավորման պայմաններում, երբ օրենքով սահմանվել է քաղաքացիության դադարեցման հարցերի լուծման կարգը, փաստացի Նախագահը քաղաքացիության դադարեցման վերաբերյալ հարցի լուծմանը «մասնակցում է» այնքանով, որքանով ունի ընդամենը Սահմանադրության 139-րդ հոդվածով նախատեսված սահմանափակ թվով գործողություններ կատարելու իրավունք: Փաստորեն, Նախագահը վարույթի եզրակափակիչ ակտն ընդունում է՝ սահմանափակվելով վարչարարությանը մասնակցող այլ իրավասու մարմինների առաջարկություններով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժել է վարչական մարմինը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորեցման հայցը ներառում է վարչական մարմնի կողմից նույն հոդվածի 1-ին մասում նշված միջամտող վարչական ակտը վիճարկելու պահանջը:

Օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը հայցը բավարարելու դեպքում կայացնում է գործն ըստ էության լուծող դատական ակտ վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու և վարչական մարմնին այդ վարչական ակտի ընդունմանը պարտավորեցնելու մասին, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանը հայցը մերժելու դեպքում վճիռ է կայացնում այդ մասին:

Ասվածի և քաղաքացիության դադարեցման վերաբերյալ դիմումների քննության արդյունքում ընդունվող ակտերի դեմ անձանց իրավունքների պաշտպանության տիրույթում Դիմողը գտնում է, որ անձն անհարկի զրկվում է քաղաքացիության դադարեցման վերաբերյալ դիմումի արդյունքում ընդունված միջամտող վարչական ակտի առկայության պայմաններում պարտավորեցման հայցի շրջանակներում դատարան դիմելու իրավունքից: Առկա իրավակարգավորումների պայմաններում Նախագահը չունի իրավասություն ըստ էության քննելու քաղաքացիության դադարեցման վերաբերյալ հարցերը և սահմանափակված է Վարչապետի կողմից ներկայացված առաջարկությամբ, ուստի ամեն դեպքում անձը զրկված է պարտավորեցման հայցով դատարանից ակնկալել պարտավորեցնել վարչական մարմնին ընդունել բարենպաստ ակտ, քանզի Նախագահի կողմից Վարչապետի առաջարկության բովանդակությանը հակասող, հակառակ հրամանագրի ընդունման իրավասության բացակայության պայմաններում դատարանն իրավունք չունի պարտավորեցնել Նախագահին կատարել իր իրավասության շրջանակներից դուրս գործողություն: Ավելին՝ դատարանը զրկված է ակտի ընդունման վարչարարության նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելուց: Նման պայմաններում փաստացի անձինք զրկվում են պարտավորեցման հայցով դատարան դիմելու իրավունքից: Բացի այդ, անձն ունի Սահմանադրությամբ երաշխավորված անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի քննության իրավունք: Հետևաբար՝ անգամ տեսականորեն, եթե անձը ձևականորեն ունի պարտավորեցման հայցով դատարան դիմելու իրավունք, քանզի հայցատեսակին ներկայացվող պահանջները պահպանում է, ապա զրկվում է դատարանի կողմից արդարացի քննության իրավունքից և փաստորեն իրավունքի պաշտպանության եղանակը կրում է ձևական բնույթ, մասնավորապես՝ անձն ունի Նախագահի հրամանագրի իրավաչափության վիճարկման իրավունք, սակայն վիճարկման արդյունքում հաստատվում է ակտի իրավաչափություն կամ ոչ իրավաչափությունը, մինչդեռ անգամ ոչ իրավաչափության հաստատման դեպքում անձը զրկվում է քաղաքացիությունը դադարեցնելու իրավունքից և փաստացի դատական պաշտպանություն հայցելով՝ չի վերականգնվում խախտված իրավունքը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, ըստ Դիմողի «Քաղաքացիության մասին» օրենքի 27-րդ հոդվածը՝ այնքանով, որքանով չի նախատեսում քաղաքացիության դադարեցման վերաբերյալ հարցի ըստ էության լուծման կարգ Նախագահի կողմից, այսինքն՝ սահմանափակում է Նախագահին իր իրավասության սահմաններում հարցը լուծել և սահմանափակում է վերջինիս Վարչապետի կողմից ներկայացված առաջարկության ստորագրմամբ, հակասում է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին՝ խաթարելով անձի

արդար դատաքննության իրավունքը: Այսինքն՝ վիճարկվում է օրենսդրական բացի սահմանադրականության հարց:

«Քաղաքացիության մասին» օրենքի 27-րդ հոդվածի բովանդակությունը հետևյալն է.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու դիմումն անձը ներկայացնում է անձամբ, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի: Հայաստանի Հանրապետությունում գտնվելու դեպքում դիմումը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, իսկ օտարերկրյա պետությունում գտնվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ: Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ ներկայացված դիմումները Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով ուղարկվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու վերաբերյալ դիմումների կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կազմած եզրակացություններն ուղարկվում են Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողով:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու վերաբերյալ եզրակացություններն ստանալուց հետո Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովը դրանք քննարկում է հանձնաժողովի ղեկավարի կողմից հրավիրվող նիստերում: Քննարկման արդյունքում կազմվում են ամփոփ եզրակացություններ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կազմած եզրակացությունների հետ մեկամսյա ժամկետում ներկայացվում Հայաստանի Հանրապետության վարչապետին:

4. Հայաստանի Հանրապետության վարչապետը Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի կողմից եզրակացություններն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Նախագահին ներկայացնում է քաղաքացիության վերաբերյալ դիմում ներկայացրած անձին քաղաքացիություն շնորհելու կամ դադարեցնելու կամ քաղաքացիության շնորհումը կամ դադարեցումը մերժելու մասին առաջարկություն՝ կցելով Հայաստանի Հանրապետության Նախագահի համապատասխան հրամանագրի նախագիծը: Սույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված բացառիկ դեպքերում Հայաստանի Հանրապետության վարչապետը կարող է անձին

քաղաքացիություն շնորհելու մասին առաջարկությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին առանց Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովից եզրակացություն ստանալու:

5. Քաղաքացիության վերաբերյալ հարցերի լուծմանն ուղղված Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերը ընդունվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 139-րդ հոդվածով սահմանված կարգով:

6. Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Սահմանադրության 61-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2. Դատական վարույթը կամ դրա մի մասը, օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով:

3. Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է:

Նախ, հարկ ենք համարում անդրադառնալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության շնորհման և դադարեցման բնագավառում Նախագահի իրավասությանը:

Սահմանադրության 134-րդ հոդվածի համաձայն՝

Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը:

Սահմանադրության 139-րդ հոդվածի համաձայն՝

1. Իր լիազորություններն իրականացնելիս Հանրապետության նախագահն ընդունում է հրամանագրեր և կարգադրություններ:

2. Հանրապետության նախագահը Սահմանադրության 131-137-րդ հոդվածներով, 155-րդ հոդվածի 3-րդ մասով, 166-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով սահմանված դեպքերում կարող է համապատասխան ակտը եռօրյա ժամկետում իր առարկություններով վերադարձնել առաջարկություն ներկայացնող կամ միջնորդությամբ դիմող մարմին: Եթե իրավասու մարմինը չի ընդունում այդ առարկությունը, ապա Հանրապետության նախագահը ստորագրում է համապատասխան ակտը կամ դիմում է Սահմանադրական դատարան:

3. Եթե Հանրապետության նախագահը չի կատարում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, ապա համապատասխան ակտն ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով:

Այսինքն՝ քաղաքացիության շնորհման, ինչպես նաև դադարեցման վերաբերյալ հարցի ըստ էության լուծման բացառիկ իրավասությունը վերապահված է Նախագահին: Ընդ որում՝ օրենսդիրը որևէ այլ մարմնի նշված հարցի լուծման վերաբերյալ որևէ այլ իրավասություն չի վերապահել: Նման պայմաններում Նախագահը պետք է լինի այն մարմինը, որը քաղաքացիության դադարեցման վերաբերյալ անձի կողմից ներկայացված դիմումի քննության արդյունքում պետք է կայացնի ըստ էության որոշում:

Ինչպես Դիմողն իրավացիորեն նկատել է՝ Նախագահին է վերապահված քաղաքացիության դադարեցման հարցերի լուծման իրավասությունը՝ այդ լիազորության իրականացման կարգն օրենքով կարգավորելու վկայակոչմամբ: Նշված կարգը սահմանված է «Քաղաքացիության մասին» օրենքի 27-րդ հոդվածով, որի վերլուծությունը հանգում է հետևյալին. քաղաքացիության դադարեցման վերաբերյալ վարույթը հարուցվում է անձի դիմումի հիման վրա, որը ներկայացվում է ոչ այն մարմնին, որն ընդունում է քաղաքացիության դադարեցման վերաբերյալ դիմումի արդյունքում ընդունվող ակտը: Դիմումի քննարկման (վարչարարության) ընթացքին մասնակցում են այլ վարչական մարմիններ ևս, որոնք իրենց իրավասության սահմաններում եզրակացություններ, առաջարկություններ են ներկայացնում: Որպես այդպիսին դիմումի քննությունը եզրափակվում է Վարչապետի կողմից քաղաքացիության վերաբերյալ դիմում ներկայացրած անձին քաղաքացիություն շնորհելու կամ դադարեցնելու կամ քաղաքացիության շնորհումը կամ դադարեցումը մերժելու մասին առաջարկություն ներկայացնելով Նախագահին՝ կցելով Նախագահի համապատասխան հրամանագրի նախագիծը: Այդուհանդերձ, Նախագահն իրավասու է քաղաքացիության դադարեցման հարցի ըստ էության լուծման փուլում բացառապես կատարելու Սահմանադրության 139-րդ հոդվածով նախատեսված գործողությունները, այն է՝ ստորագրել հրամանագիրը կամ առարկությունով այն վերադարձնել առաջարկություն ներկայացնող մարմնին՝ Վարչապետին: Եթե իրավասու մարմինը՝ Վարչապետը, չի ընդունում այդ առարկությունը, ապա նախագահը ստորագրում է համապատասխան ակտը կամ դիմում է Սահմանադրական դատարան: Նախագահի կողմից անգործության դրսևորումը ենթադրում է իրավունքի ուժով համապատասխան

ակտի ուժի մեջ մտնել: Նշված կարգավորման պայմաններում, երբ օրենքով սահմանվել է քաղաքացիության դադարեցման հարցերի լուծման կարգը, փաստացի Նախագահը քաղաքացիության դադարեցման վերաբերյալ հարցի լուծմանը «մասնակցում է» այնքանով, որքանով ունի ընդամենը Սահմանադրության 139-րդ հոդվածով նախատեսված սահմանափակ թվով գործողություններ կատարելու իրավունք. Նախագահը վարույթի եզրակափակիչ ակտն ընդունում է՝ սահմանափակվելով վարչարարությանը մասնակցող այլ իրավասու մարմինների առաջարկություններով:

Այժմ անդրադառնանք անձի՝ դատական պաշտպանության, անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի քննության իրավունքների իրացման հարցին:

Սահմանադրության 61-րդ հոդվածի և 63-րդ հոդվածի սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում: Նշված որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը: Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը

սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է: Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշման մեջ նշել է «6. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մաս): Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոտնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ

իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսինքն՝ անձը, դիմելով դատարան, պետք է լիարժեք դատական պաշտպանության իրավունք ունենա, ապահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեգիտիմ ակնկալիքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված դիմումով վիճարկվում է օրենսդրական բացի սահմանադրականության հարց, ուստի, հարկ ենք համարում անդրադառնալ նաև ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից նշված հարցի վերաբերյալ իր որոշումներում արտահայտված դիրքորոշումներին:

Այսպես, 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՄԴՈ-914 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է՝ «7. Օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե տվյալ օրենսդրական բացը հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե իրավաստեղծ մարմինը նման իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը: Սահմանադրական դատարանն իր՝ 2010 թ. փետրվարի 5-ի ՄԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է «Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»: Չարգացնելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է

հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ *երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը*: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը:

2014 թվականի ապրիլի 8-ի ՄԴՌ-1143 որոշման մեջ ՀՀ Սահմանադրական դատարանը փաստում է, որ «օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքությունն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը»:

2012 թվականի դեկտեմբերի 14-ի ՄԴՌ-1061 որոշման մեջ ՀՀ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «7. ... Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրինաստեղծ գործունեության խնդիրն է ապահովել Սահմանադրությամբ նախատեսված իրավունքների ու ազատությունների երաշխավորված և համալիր իրացումը՝ որպես իրավունքի գերակայության, իրավական պետության կայացման ու զարգացման անհրաժեշտ նախապայման: Մասնավորապես, իրավակարգավորման ձևերի ու միջոցների ընտրությունը, դրանցով անձանց իրավունքների գործադրման առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ հետապնդելը չեն կարող իրացվել ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման»:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանգում ենք հետևյալին. Նախագահին է վերապահել քաղաքացիության դադարեցման հարցերի լուծման իրավասությունը՝ այդ լիազորության իրականացման կարգն օրենքով կարգավորելու վկայակոչմամբ: Նշված կարգը սահմանված է «Քաղաքացիության մասին» օրենքի 27-րդ հոդվածով, որի վերլուծությունից պարզ է դառնում, որ քաղաքացիության վերաբերյալ դիմում ներկայացրած անձին քաղաքացիություն շնորհելու կամ դադարեցնելու կամ քաղաքացիության շնորհումը կամ դադարեցումը մերժելու մասին առաջարկությունը Վարչապետը ներկայացնում է Նախագահին՝ կցելով Նախագահի համապատասխան հրամանագրի նախագիծը: Նախագահին մնում է միայն կա՛մ ստորագրել հրամանագիրը, կա՛մ առարկությունով այն վերադարձնել առաջարկություն ներկայացնող մարմնին՝ Վարչապետին: Եթե Վարչապետը չի ընդունում այդ առարկությունը, ապա Նախագահը ստորագրում է համապատասխան ակտը կամ դիմում է Սահմանադրական դատարան: Այսինքն՝ Նախագահի կողմից համապատասխան հրամանագիրը ստորագրելու հիմք է հանդիսանում միայն վարչապետի առաջարկությունը:

Մյուս կողմից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական և նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության

դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը սահմանում է ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք):

Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ (այսուհետ նաև՝ Սահմանադրություն), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով (...):*

Օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:*

Օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժել է վարչական մարմինը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորեցման հայցը ներառում է վարչական մարմնի կողմից նույն հոդվածի 1-ին մասում նշված միջամտող վարչական ակտը վիճարկելու պահանջը:*

Օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *վարչական դատարանը հայցը բավարարելու դեպքում կայացնում է գործն ըստ էության լուծող դատական ակտ վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու և վարչական մարմնին այդ վարչական ակտի ընդունմանը պարտավորեցնելու մասին:*

Ստացվում է, որ ներկայիս օրենսդրական կարգավորման արդյունքում ստեղծվում է այնպիսի իրավիճակ, երբ անձը, մի կողմից, ունի Սահմանադրությամբ երաշխավորված անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի քննության իրավունք, մյուս կողմից, Նախագահի հրամանագրի, որպես վարչական ակտի, իրավաչափության վիճարկման իրավունք, սակայն նույնիսկ եթե վիճարկման արդյունքում հաստատվում է ակտի ոչ իրավաչափությունը, միննույն է՝ անձը շարունակում է զրկված մնալ քաղաքացիությունը դադարեցնելու իրավունքից, չի վերականգնվում վերջինիս խախտված իրավունքը, քանի որ, ինչպես արդեն նշվեց, ՀՀ նախագահի կողմից քաղաքացիության դադարեցման մասին հրամանագիրը ստորագրելու հիմք է հանդիսանում

միայն ՀՀ վարչապետի համապատասխան առաջարկությունը: Վարչական դատարանի՝ վեճն ըստ էության լուծող դատական ակտը, որպես այդիպիսին, Նախագահի կողմից համապատասխան հրամանագիրը ստորագրելու հիմք չի հանդիսանում:

Օրենսդրական նման կարգավորումը, կարծում ենք, չի բխում ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների պահանջներից: Այն ըստ էության շրջանցում է անձի սահմանադրորեն երաշխավորված դատական պաշտպանության և անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի քննության իրավունքները, դատարան դիմելու լեզիտիմ ակնկալիքը, լիարժեք դատական պաշտպանության հնարավորությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- «Քաղաքացիության մասին» օրենքի 27-րդ հոդվածը, այնքանով, որքանով չի կարգավորում ՀՀ նախագահի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերն ըստ էության լուծելու կարգը, համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը խնդրահարույց է:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան